ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ղազախստանի Հանրապետություն (Ալմաթի) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Էդուարդ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն, օգոստոսի 17-20-ը, 2022 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիա (ԿՍՀՄԱ)

5. **Գործուղման նպատակը**.
   Մասնակցություն Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի 30-ամյակին նվիրված միջազգային համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվել են մասնակից պետությունների (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, ՈՒզբեկստան և Ադրբեջան) սոցիալական պաշտպանության ոլորտներում իրականացված կամ նախագծվող փոփոխությունների առաջիկա ծրագրերը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Միջոցառման շրջանակում մասնավոր հանդիպում է կայացել Ուզբեկստանի ֆինանսաների նախարարության Ոչ բյուջետային կենսաթոշակային հիմնադրամի պատվիրակության հետ:

   Համաժողովին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված բարեփոխումները, Միասնական սոցիալական ծառայության գործունեությունը, մատուցվող ծառայությունների ուղղությունները, դրանց որակի բարձրացմանն ուղղված կարճաժամկետ և հեռանկարային միջոցառումները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ուզբեկստանի պատվիրակության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել փոխադարձ այցերի միջոցով ավելի մանրամասն ծանոթանալ երկրների սոցիալական ոլորտի վերջին շրջանում ունեցած փոփոխություններին: Մասնավորապես, Ուզբեկստանի պատվիրակությունը մեծ հետաքրքրություն է դրսևորել Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի բարեփոխումների նկատմամբ և ցանկություն հայտնել, Հայաստան այցի միջոցով, տեղում ծանոթանալ Միասնական սոցիալական ծառայության գործունեությանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղման արդյունքներով քննարկվում է Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի հետ համագործակցության ձևաչափի փոփոխության և համագործակցության արդյունավետության բարձրացման հարցը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Միասնական սոցիալական ծառայության պետ՝ Է.Պետրոսյան

24.08.2022թ.